

ԿՈՇԻ ՎՐԱՑՆԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋՈՒ

Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կոշ գյուղի եզրին գտնվող միանավ եկեղեցու պատին եղած վրացերեն արձանագրության թելադրանքով Մ. Բրոսեն կառույցը «Գյուրջիքիլիսա» է կոչել¹։ 1893 թ. Հայաստան այցելած Ն. Մառը նկատում է այդ արձանագրությունը, բայց հանգամանքների բերումով, ստիպված է լինում դրա ընդօրինակությունն ու ուսումնասիրությունը հետաձգել։ Տասնամյակներ անց նա գրում է. «Վրաց ազդեցության տակ աճած ուշ հայկական քաղկեդոնականության նկատմամբ գոյացած հետաքրքրության կապակցությամբ անհրաժեշտ էր ընդօրինակել Կոշի հայոց եկեղեցու վրացական արձանագրությունը, էջմիածնից 18 կմ հեռավորության վրա, որ ես նկատել էի տակավին 1893 թ., բայց չէի ընդօրինակել հիվանդության պատճառով։ Շտապելով Սվանեթ, [1913 թ. պեղումների ընթացքում], ես անձամբ չէի կարող այդպիսի ուղևորություն ձեռնարկել [դեպի Կոշ]։ Նրա կատարումը հանձնարարեցի Հ. Ա. Օրբելուն՝ Ա. Վրուլի և ուսանող Գ. Զիտայայի հետ միասին։ Զափազանց հետաքրքիր են այդ ուղևորության արդյունքները. միայն լուսանկարահանումները հասնում են 85-ի»²։ Հ. Օրբելու թողած ձեռագիր ժառանգությունը ծանոթ մասնագետները տեղյակ են, որ հանգուցյալ գիտնականը վերծանել է Կոշում գտնվող բոլոր արձանագրությունները և մտադիր է եղել ապագայում հրատարակության պատրաստել³։ 1913 թ. օգոստոսի 4-ին Ն. Մառին հասցեագրած նամակում Հ. Օրբելին ընդօրինակում է Կոշի վրացերեն արձանագրությունը և հաղորդում, որ երկրորդ արձանագրություն ևս կա⁴։ Այժմ, իհարկե, իմաստ չունի անդրադառնալ Հ. Օրբելու վերծանության լավ ու վատ կողմերին, քանի որ այն իրենից նախնական աշխատանք է ներկայացնում։ Նա ինքնուրույն միավոր է դիտել արձանա-

¹ Տե՛ս „Melanges Asiatiques“, t. V, 1868, p. 118. Կոշի հնությունները նկարագրող Հ. Շահխաթունյանը նման անուն չի հիշում, ինչպես որ ծանոթ չէ և արձանագրության գոյությանը (տե՛ս նրա Ստորագրություն կաթողիկե էջմիածնի և հինգ դաւոռացն Արարատայ, հ. 2, էջմիածին, 1842, էջ 62—65)։ Կոշի մասին խոսելիս Ղ. Ալիշանի հիմնական աղբյուրը Հ. Շահխաթունյանի աշխատությունն է (տե՛ս նրա Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 145—146)։ Դասակարգին այս գյուղում եղել և վրացերեն արձանագրության առկայությունը հիշատակել է Ք. Վերմիլը (տե՛ս նրա Материалы для истории грузино-армянских отношений, СПб., 1904, стр. 73)։

² Н. Я. Марр, Ани, книжная история города и раскопки на месте городища, М.—Л., 1934, стр. 123. Լուսանկարների թվի մեջ վրիպում կա. այդ ուղևորության ժամանակ, ըստ Օրբելու նամակի, „сняли в общем 57 фотографий“ (տե՛ս ЛО Арх. АН СССР)։

³ Արձանագրություններն ընդօրինակված են մատիտով և այժմ նրանց հրատարակության պատրաստելը տեղում վերծանելուց նվազ ջանք չի պահանջում։

⁴ Այդ նամակը, ինչպես և Ն. Մառի ու Հ. Օրբելու ողջ գրադրությունը մենք պատրաստել, ծանոթագրել ու հանձնել ենք տպագրության («Հայագիտական հետազոտություններ», պրակ Ա)։

գրությունն առանձնակի փորագրված մի հատվածը: Գիտնականի արխիվում գտնվեց և այդ վերծանության տպարանային շարվածքի սրբագրական օրինակը, որը էական տարբերություն չունի նամակում եղած տեքստից և հետևել է հեղինակին վայել վերծանություն կոչվելուց:

Կոշի վրացերեն արձանագրության վերծանությունն ու հրատարակումը վիճակված էր իրականացնել ակադ. Ա. Շանիձեն: 1924 թ. մայիսին Թբիլիսիի պետական համալսարանի նախաձեռնած գիտարշավի կազմում⁵ նա լինում է Կոշում, ընդօրինակում այն և տասնամյակներ անց, անհրաժեշտ ներածականով ու ծանոթագրություններով, հրատարակում ՎՍՄՀ ԳԱ ձեռագրերի ինստիտուտի «Տեղեկագրում»⁷: Հենց սկզբից ասենք, որ Հայաստանի տարածքում պահպանված վրացերեն արձանագրություններից ամենահաջող ու ամփոփ հրատարակության արժանացածը Կոշինն է: Խոսքը ոչ միայն լուսանկարի ու զրչանկարի առկայությանն է վերաբերում, այլև գրչության հնագրական նկարագրությանը, տեքստում գործածված տերմինների քննությանը և պատմա-բանասիրական օժանդակ նյութի վկայակոչմանը:

Վրացերեն արձանագրությունը վիճագրված է գյուղավերևի միանավ աղոթատան-եկեղեցու հարավային պատին, արևելյան վերին անկյունում, բիվին հարող երկու շարքի վրա⁸: Այս եկեղեցու շրջապատում է եղել Կոշի հանգստարանը, իսկ բուն գյուղատեղին ընկած է նրանից հարավ-արևելք:

Մեզ հետաքրքրող արձանագրությունը լավ է պահպանվել, ամբողջական է ու հստակ: Վնասված է երկրորդ շարքի մի երկու տառանիշ, այն էլ հեղտ վերականգնելի է⁹: Ինչպես ճիշտ նկատել է Ա. Շանիձեն, արձանագրության միջնամասում փորագրողը սխալմամբ բաց է թողել կարևոր մի հատված և երբ կռահել է վրիպումը՝ այն վիճագրել է առանձին, բուն տեքստի ձախ մասում, պատի երկրորդ շարքի վրա (վերծանության ժամանակ, բնական է, այդ հատվածը մոծում անք բնագիր, բովանդակությամբ սպասելի տեղը, մեծ փակագծով նշելով նրա սկիզբն ու վերջը):

Վերծանության առումով հրապարակված տեքստում ճշգրտելիքներ գրեթե չկան: 3—4 տողի մեջ/ցրոս-ն ցր գրերի վրա հապավման նշան ունի, այդ պատճառով էլ կարդալու է մեջ/ցրոս, մինչդեռ միջարկելի հատվածում (1—2 տող) առկա է մեջ/ցրո[ս]ա. նույն բառի այլագրության նման դեպք արձանագրության մեջ էլի կա. Շահնշահի անունը մի դեպքում գրված է Մ(ս)ՃՄ (տ. 2), մյուսում՝ Մ(ս)ՅՃՄ (տ. 4): Հրապարակման «մրգլովանի» տեքստում վրիպմամբ բաց է թողնվել ՄՄ(ո)ՃՄ(ո)Ս(ս)ա[ս] բառի ընդգծված ա-ն, իսկ «մխեդրուլի» գրադարձության բնագրում դուրս է մնացել արձանագրության 8-րդ տողի երկրորդ բա-

⁵ 2. Օրբելին ղգացել է այդ, ուստի և ձեռնպահ է մնացել հրապարակումից:

⁶ Այն է՝ Գ. Զուրինաշվիլի (նախագահ), Ա. Շանիձե, Լ. Մելիքսեթ-Քեկ և ճարտարապետ Ն. Սևերով:

⁷ А. Г. Шанидзе, Грузинская надпись XIII века в сел. Кош „ (ՊՄՅՄՅՊ“, I, 1959, стр. 7—19).

⁸ Ա. Շանիձեի հոգովածում վրիպմամբ գրված է «եկեղեցու հյուսիսային պատի վրա» (նշվ. աշխ., էջ 7):

⁹ Կոշի այս ու մյուս եկեղեցիների պատերին հրաձգությունից գոյացած վնասվածքներ կան: Վրացերեն արձանագրության երկու տառանիշի կորուստը ևս փամփուշտից առաջացած փոսիկով է պայմանավորված:



፳፻፲፱ ዓ.ም. ሚያዝያ ፳፱ ቀን
 ሐረርጌ ገደማ ለፍጥነት ለማድረግ
 ለሚገባው ስራ ለሚገባው ስራ
 ለሚገባው ስራ ለሚገባው ስራ
 ለሚገባው ስራ ለሚገባው ስራ

[illegible]

որ՝ Ի(Պ)Ճ. Գրչանկարում երբեմն չի նկատված բառանշատման երկկետի առկայությունը, հապավման նշանը կամ, լուսանկարի թելադրանքով, առանձին տառանիշներ ներկայացված են սակավ նկատելի, մինչդեռ տեղում նրանք հստակ ու որոշ են: «Մրգովանի» շարվածքի ժամանակ վերականգնման վակադոզ է տրված միջարկելիք հատվածի վերջին բառի օ-ն, թեև այն տեղում պահպանված է: Այս ամենը, ըստ էության, վերծանությանը որևէ բանով չի խանգարում և միայն մանրուք է¹⁰: Արձանագրությունն է

1 1/ ს(ა)ხ(ე)ლითა ღ(მრ)თ(ისა)ჲთა, ო(მ)იოხ(ე)ბითა წ(მიდ)ისა ღ(მრ)თის-
2 მშ(ო)ბლ(ი)ს(ა)ჲთ[ა] / ჩ(უ)ენ. მ(ა)ნდატ(უ)რთ-უხ(უ)ცესმ(ან) ივ(ან)ე და
3 შ(ა)ნშეს და მისთა ძმათა / დედამ(ა)ნ ხ(ო)შ(ა)მ(ა)ნ, გაგიშვთ თქ(უ)ენ
4 კოძელთა ზ(ე)მოისა მზღვ(ა)რისა შარიადი ჯდა ჴუფმოისა მზღვ(ა)რ(ი)ს[ა]ჲ
5 დიკი(ი)ს[ა]ჲ ოდენ კოშ(ე)ლისა კაცისაჲ გაშუფ(უ)ლი[ა] / ო(ლ)ალაჲ ჩ(უ)ენისა
6 და ჩ(უ)ენთა შვილთა—შ(ა)ქწშეს და / მისთა ძმათა დღეგრძელობის(ა)-
7 თვს. და თქ(უ)ენ გაგვკუეთეთ, რომე ერთი საუნვე(ე)ლი თქ(უ)ენითა ვა-
8 რითა და / მისითა ჴურჴლითა უკდავად იყოს ჩ(უ)ენთვს. და / ამისნი ჩ(უ)ენ
9 გ(ა)მსრ(უ)ლ(ე)ბ(ე)ლნი ვ(ა)რთ. და ვ(ი)ნცა შეცვ(ა)ლოს / წყეულ და
10 'მ(ე)ი(ო)რ(ე)ი(ე)ი(ე)ლ არს წ(მიდ)ათა მ(ა)დლითა.

Թարգմանություն.— Հանուն աստուծո. բարեխոսությամբ սուրբ Աստ-վածածնի, մենք՝ մանդատուրքուխուցես Իվսնես և Շա[հ]նշեի ու նրա եղբայրների մայր Խոջան, մեզ և մեր որդոց՝ Շահնշեի ու նրա եղբայրների արևշատության համար թողինք ձեր կոշեցիներե՛ր՝ վերին [հանդա]սահմանի շարիաթը և վարի [հանդա]սահմանից՝ միայն ցորենի զալայից է ազատ-ված կոշեցի մարդը: Եվ զուր սահմանեցի՛ք. որ մեկ արու՝ ձեր եզով ու իր սարճով մշտապես մեզ համար լինի: Եվ մենք կատարողն ենք սրա: Եվ ով էլ փոխի՝ սնիծյալ ու նզովյալ է սրբաց շնորհով:

*Առաջարկվող խորգմանութիւնը որով մեկնաբանութիւնների կարիք սինի.
ամենից առաջ խոսքը վերագրելու է Երտի Տօնացուն տխրեմտա զարտա ըն
ճեստա շէրշէտա չլծաղադ Կոյո իշենտշո հատվածին, որով սահմանվում է
կոչեցինների պարտույթը Զաքարյան տան հանդէպ: Ակազ. Ա. Շանիճեն այսպէս է
խարդմանել. одна сахнвель (земли) вашими быками и плугом вечно
была (обрабатываема) для нас¹¹: Այստեղ եկակետային է Տօնացուն տիր-
մինը. նրա առաջին և հիմնական նշանակութիւնը վարող գործիք լինելն է
(արոր, վեցէկ կամ գուծան): Ա. Շանիճէի վկայակոչած բնագրական շորս
հատվածներում էլ բառիս այդ իմաստն է գործածված: Պրոֆ. Ի. Արուլաճէի
նորերս լույս տեսած բառարանում ևս նույն այդ բացատրութիւնն է¹²: Աստվա-
ծադնչական տեքստերում վրացերեն Տօնացուն-ին համապատասխա-
նում է հայերեն մամ (Ղուկ. Թ., 62) և մամ արօյոյ (Դատ. Գ., 31)¹³.*

¹⁰ Թերևս արձանագրության լոռաթուղթի և լեռնաշրջանաշարի կրճատողության հետևանքով այսպիսի լեռնաշրջանաշարի և լեռնաշրջանաշարի (լեռնաշրջանաշար) շրջանում էր սպասելի, քանի որ մեր երկրապաշտպանի հապավումը բացատրելի չէ, բայց դրանից որևէ իմաստային վիճակագրություն չի առաջանում, ուստի մենք էլ գերադասեցինք դրական և կասկածի լեռնաշրջանաշարին:

¹¹ А. Г. Шанидзе, *изд. шрифт., 12 9:*

¹³ ილია აბულაძე, ძველი ქართული ენის ლექსიკონი, თბ., 1973, გვ. 386.

¹³ საენველი თერძიანის ზანდამანაძე ჭანიძე იან. ივ. ჯავახიშვილი, საქართველოს ეკონომიური ისტორია, I, ტფ., 1930, გვ. 155—157.

դ) Արձանագրի հեղինակները մասնավոր կարգով շեշտում են, որ այդ «մեկ սախնվելը» մշտապես իրենց համար է լինելու: Հազիվ թե Զաքարյան-նևրը առիթ ունենային մեկ-երկու տասնամյակ առաջ իրենց ազատագրած դյուղում կամ գավառում 0,7 կամ նույնիսկ 1 հեկտար հողի համար հարկային նման դիջումներ անել: Այդ հողը առանց զիջման էլ իրենց սեփականություն էր ճանաչվում. եթե խոսքը հողային միավորին վերաբերեր, ապա մշտապես իրենց համար լինելը չէր շեշտվի, քանի որ այդ ինքնին հասկանալի է:

և) Մեկ օրավար հողի մշակումը մեկ գյուղի համար ընդամենը ժամերի աշխատանք է, ուստի նման մեկնաբանության պարագայում անհասկանալի է մնում ժամեր եզով ու իր սարվածքով (սարքով)» արտահայտության անհրաժեշտությունը: Շատ բնական է, որ գյուղացիներն իրենց լծկանով ու դործիքներով էին այդ անելու: Նշանակում է, արձանագրությունը ավելի մեծ աշխատանք պետք է նկատի ունենար՝ այդ պարագան մասնավորապես շեշտելու համար:

զ) Եթե Սաֆեջեղո տերմինի տակ օրավար հող հասկացվեր, ապա գյուղացիներին պատկանող լծկանի ու սարքի հետ միաժամանակ պիտի նշվեր և գուքանը կամ առուրը, որովհետև լծկանի սարք հասկացողության մեջ մտնում են լուծը, սամին, փոկը և այլն, բայց ոչ ամենահիմնականը՝ արորը կամ գութանը: Ա. Շանիձեն օրինակներ է բերում խեսուրական բառուբանից, Գուրիայի երկրագործական տերմիններից և հավաստում «ցարոն օթաօլ» (եզան սարք) արտահայտության գոյությունը՝ գութան իմաստով: Բայց դիտելու է, որ խեսուրական կամ գուրիական տվյալները դժվար է համաձայնեցնել կամ նույնացնել Կոշում եղածի հետ և ապա՝ արձանագրության մոտոս քրեթլուտա-ն վերաբերում է Սաֆեջեղո-ին և ոչ՝ ցարո-ին:

Ահա այս պատճառաբանություններով է, որ արձանագրության Սաֆեջեղո-ն մենք հասկանում ու թարգմանում ենք առուր և ոչ օրավար կամ գութանավար²²: Դրանով իսկ բոլորովին փոխվում է կոշեցիների սահմանած պարտության բովանդակությունն ու չափը: Նրանք պարտավոր են եղել ոչ թե մեկ օրավար հող իրենց եզով ու սարքով միշտ պատրուցի համար մշակել, այլ՝ մեկ առուր իրենց եզով ու սարքով մշտապես գործել է պատրուցների համար: Ինչ խոսք, մշտապես գործող այդ մեկ արորը (մեկ մաճը) անհամեմատ ավելի շատ հող կմշակեր, եկամուտ կտար, քան որևէ չափի օրավար հողն է:

Արդարության դեմ չմեղանչելու համար պիտի ասել նաև, որ Ա. Շանիձեն վերապահությամբ է առաջարկել Սաֆեջեղո-ն օրավար հասկանալ, իսկ հողվածի վերջում անհրաժեշտ է նկատել անդրադառնալ, թե հիշյալ արտահայտությունը կարելի է մեկնաբանել և այլ կերպ, թարգմանելով՝ «а вы установили, чтобы один плуг с вашими быками и его (плуга) принадлежностями вечно был для нас»²³.

Վերևում փորձեցինք ապացուցել, որ իրականը հենց այսպիսի ընկալումն ու թարգմանությունը պիտի լինի, միայն մեկ անհրաժեշտ սրբագրությամբ՝

²² Թարգմանության մեջ գուքան (գրաք. գութայ) տերմինից խուսափում ենք այն պատճառով, որ բառս միջնադարյան աղբյուրներում հազվագեպ գործածություն ունի (տե՛ս նշԲ, II, 1049), ինքն էլ արորի մի տարատեսակն է:

²³ А. Г. Шанидзе. նշվ. աշխ., էջ 17:

П.Л.УГ (գութանի) փոխարեն ԲԱՆՈ տերմին գործածելով (վերջինս կարող է և առողջ նշանակել, և գուրան կամ վեցկի):

Կոշի վրացերեն արձանագրությունը, ինչպես որոշ այլ նման հուշարձան-հիշատակարաններ, թվական չունի, ուստի նրանում հաղորդված տեղեկությունները գնահատելու համար հարկադրված ենք գրության ժամանակը ճշտել ըստ օժանդակ աղբյուրների Ակադ. Ա. Շանիձեն հիմնականում այդ արել է՝ վիճագրման ժամանակ սահմանելով 1214 թ. հետո (Զաքարիայի մահը)²⁴, բայց մինչև 1219 թ. (Իվանեի աթաբեկ լինելու վկայությունը Ավանի արձանագրության մեջ)²⁵, նվ հիրավի, Կոշում Իվանեն իրեն կոչում է մանդատուրբուխուցես, որին նա արժանացավ Զաքարիայի մահից հետո, իսկ դրանից առաջ մսախուրբուխուցես էր²⁶, Որ Ավանի 1219 թ. արձանագրության «աթաբեկը»²⁷ որևէ առումով կասկածի ենթակա չէ՝ հաստատվում է Անիի Առաքելոց եկեղեցու 1220 թ. վիճագրով, ուր Իվանեն կոչված է աթաբեկ, իսկ Զաքարիայի որդի Շահնշահ Սարգիսը՝ ամիրսպասալար²⁸: Այսպիսով, Իվանեի արձանագրությունը 1213—1218 թթ. արանքում է գրված, թերևս 1214/15 թվականներին, երբ Շահնշահը դեռ պատանի էր ու հիշատակելի՝ իբրև խոշարի սնուցած որդի²⁹: Ընդ որում արձանագրության «Յանջն ըն Յոնտա ժմատա ընդ ընձն» արաահայտու-

24 Վարդանի Զաքարիայի մահը հիշում է հայոց 661 (1212) թվականի տակ (տե՛ս նրա «Հաւարումն պատմութեան», Վենետիկ, 1862, էջ 140), իսկ ըստ Ստեփանոս Եղիսկոպոսի (Օրբելլա՛ն) այն տեղի է ունեցել 1213 թ. (Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հ. 1, Երևան, 1951, էջ 38, հմտ. էջ 55, ծան. 22):

25 А. Г. III а н в д з е, նշվ. աշխ., էջ 10 և 13:

26 Ամիրսպասալարություն ստանալուց հետո էլ Զաքարիան շարունակում էր և մանդատուրբուխուցես մնալ, ինչպես այդ վկայված է Հաղբատի 1210 թ. արձանագրության մեջ (Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 168):

27 Կ. Ղաֆադարյան, Ավանի երկրչվյան ծածկագիր արձանագրությունը, Երևան, 1945, էջ 17:

28 Դիվան, I, 16—17: Ափսոսանքով պիտի նշենք, որ նույն Առաքելոց եկեղեցու կիսատ պահպանված և Իվանեի վերաբերող մեկ այլ արձանագրություն (Ք 67) հրատարակչների կողմից լրացվել է ոչ ճիշտ. եթե Իվանեն տրաբեկ է (այդ ճիշտ է կոհսված նրա՝ առաջինը հիշատակված լինելու փաստից), ապա ամիրսպասալար Զաքարեն (Զաքարիա) լինել չի կարող (նա վաղուց մահացած էր), այլ՝ նրա որդի Շահնշահը, որ հաստատվում է վերևում առկույված արձանագրությամբ:

29 Վարդանի տեղեկությամբ՝ 1212 թ. Շահնշահը «տղայ մի հնգամեայ էր» (նշվ. աշխ., էջ 140), ուրեմն՝ 1207 թ. ծնված: Հաղիվ թե 1220 թ. 13-ամյա Շահնշահը ամիրսպասալար դառնար: Վարդանի գրչագրում կրկին վրիպում կա. Անանուն Սեբաստացու «Տարեգրության» համաձայն, Շահնշահը «տղա մի է ամաց» էր («Մանր ժամանակագրություններ», II, 136): Ուրեմն Վարդանի բնագրում է՝ > և չփոթ է տեղի ունեցել: Այդ հաստատող կարևոր մի վկայություն ունենք Հռոմայրի 1206 թ. (ՈՄԵ) արձանագրության մեջ, ուր ասված է. «յամիրսպասալարուրեան Զաֆառի և որդոյ իւրոյ Շահնշահի»: Սակայն Հառիճի 1201 թ. (ՌՄ) արձանագրության շնորհիվ հայտնի է դառնում, որ Շահնշահը ավելի շուտ է ծնվել: Զաքարիան գրում է. «...նա Զաքար է մանդատորթախուցէս ամիրսպասալար հայոց և վրաց, որդի Մեծի Սարգսի, գանձագին արարի զհույսկաւոր սուրբ ուխտս Հառիճա ի յիւր բնական հայրենատիրացն յաղագս կենդանութեան տեառն իմոյ բարեպաշտ Թամար թագուն և փրկութեան ինձ և հարազատ եղբար իմոյ Իանէի և զաւակաց մերոց Շահնշահի և Աւագին և ծնողաց մերոց...» (Հ. Եղիազարյան, Հառիճա վանքը և նրա վիճագրությունը, «էջմիածին», 1957, ն, էջ 59): Ուրեմն՝ Վարդանի մոտ պիտի ունենայինք «Ժն (կամ Ժէ) ամեայ»: Ամիրսպասալար դառնալիս Շահնշահը եղել է 23—25 տարեկան:

թյունը (բառացի՝ Շանշեի ու նրա եղբայրների մայր) արիտի հասկանալ իբրև pluralis majestatis, իմա՝ ձոնոնս ձոնոնս — նրա եղբոր, քանի որ Իվանեն ու խոշարը մեկ որդի ունեին՝ Ավագ³⁰, Հիշյալ արտահայտության փաստից ելնելով, Ա. Շանիձեն վարկածի կարգով այն միտքն է հայտնում, թե «Ուրեմն խոշա[բ]ը ինչ-որ հիմք է ունեցել, մեղ ստույգ անհայտ, իրեն կոչելով Շանշեի ու նրա եղբայրների (ընդգծումը՝ Պ. Մ.) մայր (Ավագի և Աղբուղալի?)»³¹, նման հարցադրման պատճառը Թալինի 1267 թ. (իրականում 209—1307 թ.) արձանագրության³² վրիպյալ մեկնաբանությունն է։ Աղբուղան (յուրիշ է Աղպուղա) թողնում է «գթալնայ գինոյ խալէն վասն առնշատութեան տմիրսպասալար Շահնշահի՝ եղբաւր իմոյ և»։ Խոսքը վերաբերում է ոչ թե Շահնշահ Ա-ին՝ Զաքարիայի որդուն (հիշված Կոշում), որ մահացել է 1261 թ., այլ Իվանե Բ-ի որդի Շահնշահ Բ-ին, մահացած 1320 թ., որ իրոք իր եղբայրն էր (մյուս եղբայրները՝ Վահրամ, Արտաշիր...)։ Արձանագրության մեջ նա ուղղակի ասում է, որ ինքը «թողն մեծին Շահնշահի» է, «որդի Իվանէի» (Իվանե Ի), Ա. Շանիձեն «Շահնշահ» տիտղոս է ընդունել և վերագրել Սարգիս Երկայնաբազուկին, մինչդեռ այն իբրև տիտղոս առաջին անգամ Զաքարիա ամիրսպասալարը կրեց, ինչպես վերջերս պարզվեց Կոշում Պետրոս Ականատեսի արձանագրության վերջնականությանից, 1196 թ. սկսած (երկար ժամանակ այդ տիտղոսը կրելու սկիզբ էր համարվում 1199 թ.՝ Անիի ազատագրումը)³³, Այնպես որ՝ Կոշի վրացերեն արձանագրության «ձոնոնս ձոնոնս»-ն միայն լեզվական իրողություն է և նրանից Զաքարյան տան տոհմածառը վերանայելու անհրաժեշտություն չի բխում։

Կոշի արձանագրության մեջ հիշատակված անձանց ինքնությունը պարզելու որևէ անհրաժեշտություն չկա, որովհետև նրանք քաջ հայտնի են և այլ աղբյուրներից։ Դիտելու է միայն, որ Իվանեի կինը այստեղ իրեն կոչում է խոշա և ոչ խոշալ կամ խոշագ³⁴։ Գուցե լավ կլինի գիտական գրականության մեջ հենց խոշա էլ կոչել՝ կանխելու համար նրա և նրա թոռան՝ Ավագի աղջիկ խոշաբի նույնանունությունից բխող հնարավոր շփոթը³⁵։

Անդրադառնալով Կոշում վրացերեն արձանագրություն թողնելու փաստին, հարկավոր է նկատի առնել Զաքարյանների գործադրած ջանքերը՝ Արա-

30 Հմմտ. А. Г. Шанидзе, նշվ. աշխ., էջ 11—12։

31 Նույն տեղում, էջ 13։

32 Հրատ. տե՛ս «Վիմական տարեգիր», կազմեց Կ. Կոստանյանց, ՍՊԲ, 1913, էջ 110—111, Կան սխալներ, այդ ընդմեջ 209-ն կարդացվել է 209. օգտվում ենք վիմագրադետ Ս. Ավագյանի տրամադրած լուսանկարից։

33 Ա. Ն. Շահինյան, Կոշի կոթողը և նրա արձանագրությունը («Պատմա-բանասիրական նախնա», 1968, № 2, էջ 198 և 201). «Շահնշահ» տերմինի գոյությունը ժամանակին նկատել է Մխ. Տեր-Մկրտչյանը (Մի քանի հին արձանագրություններ, «Zeitschrift für armenische Philologie», B-d II, Heft I, Marburg, 1903, S. 44). Հիշյալ 1199 թ. ամենեվին վերանայելի չէ, քանի որ Անիում պահպանվել է Քել-Սուլթան Շեդդադիի (الشدادی)

դարսկերեն արձանագրությունը, գրված 1198—1199 թթ. արանքում (Մ. Т. Гюзальян, Персидская надпись Кей-Султана Шеддади в Ани, «Академику Н. Я. Марру», М.—Л., 1935, стр. 633, 641)։

34 Եւթմ — խոշա դրության րացատրություն տե՛ս А. Г. Шанидзе, նշվ. աշխ., էջ 11։

35 Նրանց մասին տե՛ս Գ. Հովսեփյան, Զաքարյանից ժողովը («Շողակաթ», էջմիածին, 1913, էջ 22—25)։

դաժնունը ազատագրելու համար, Ջաքարիա և Իվանն եղբայրները այստեղ հայերեն բազմաթիվ հիշատակարաններ են վիճաբերել: Նրանք Արագածոտնին առաջին անգամ տիրացել են 1191 թվականին, որի վկայությունը այդ թվականին Փարպիում Ջաքարիայի թողած արձանագրությունն է³⁶: Ա. Շահինյանի արդարացի կոհսմամբ, Ջաքարյանները այդ ընթացքում չեն կարողանում գրավել Անրեբրդը, ուստի ետ են քաշվում³⁷, Այգ ամրության նվաճումը տեղի է ունեցել հինգ տարի անց՝ 1196 թ.³⁸, Ճիշտ է, վերջերս փորձ արվեց վերանայելու ե այս թվականը, հիմք ունենալով Կոշում Պետրոս Ականատեսի կանգնեցրած կոթողի արձանագրության տվյալները (1195 թ.)³⁹, բայց դա պարզապես սխալ հաշվարկման արդյունք էր: Պետրոսը «հոգո ալամբ» ալատարարներին տեսել է Ուր (1175 թ.), իսկ «Եւ մին այդ [տար]ին խաւարեցաւ արեւ[զակն]», որ նշանակում է հաջորդ տարին՝ 1176: Եվ իրոք էլ այդ տարին խավարում է եղել⁴⁰, լրիվ խավարում (1176 թ. ապրիլի 11-ին), որի մասին խոսում է Դ. Քոբայրեցին⁴¹: Պետրոս Ականատեսը այնուհետև ձշտում է, թե «դղրդեցաւ երկիր, եւ յետ Ի (20) ամի տեսի Ջաքարէ եւ [Իւանէ]», երբ «սրբեցաւ երկիրս մեր և պայծառացան եկեղեցիք Հայաստանեայց»: 1176 թվականից անցել է 20 տարի (=1196 թ.) և Ջաքարյանները ազատագրել են երկիրը՝ Արագածոտնը⁴², Թերևս այս անգամ էլ, պարագաների թելադրանքով, նրանք երկար չեն մնացել գավառում, և Արագածոտնը նորից անցել է «աղախնայծին որդոյն հաքարու»⁴³, վերջնականապես ազատագրվելով միայն 1199—1200 թթ., ինչպես հավաստում է Անրեբրդի ամատույցներում կանգնեցված խաչքարի արձանագրությունը⁴⁴, Իհարկե, Ջաքարիան կամ Իվանեն նշանակալիորեն պիտի թեթևացնեին տեղիս բնակչությանից գանձվող հարկերը, բայց ոչ վերացնեին: Վերջին կարգի արտոնագրեր նրանք կարող էին տալ եկեղեցականներին, ինչպես որ դեռ 1191 թ. Ջաքարիան էր «ազատ արարել զՓարպո իրիցանիս յամենայն հարկէ»⁴⁵:

Արագածոտնը ազատագրելուց հետո Երկայնաբազուկ եղբայրները հարկերից ազատել ու նոր կալվածներ էին նվիրել և Կոշավանքին, առ այդ թողնելով այսպիսի մի արձանագրություն. «Եւ՝ ամիրսպասալարս Ջաքարիա, եւ Իւանէ կամաւք եւ ողորմութեամբն Քրիստոսի առաք զերկիրս Հայոց եւ տունեցանք հայրենի աշխարհս մեր, Յայս ժամանակիս տեսաք զվարդապետս Պետրոս՝ սպասաւոր սրբոցս նշմուրիտ եւ... եւ աղաւթաւաւ, եւ տուաք ի սուրբ ուխտս զԽոնկուր՝ որ իւր ջրով եւ հանդովն եւ լեւսմբ եւ դաշտով, եւ... վերստին դարձուցաք ի սուրբ եկեղեցիս եւ աղբիւրն Աւանս: Եւ զինչ հայրենիք կա ի գաւառիս ազատ յամենայն յարկէ եւ [հաստատեցաք] հայրենիք սմա եւ հոգեւոր

36 Նոր հրատ. տե՛ս Ա. Ն. Շահինյան, նշվ. աշխ., էջ 200—201:

37 Նույն տեղում:

38 Վարդան, նշվ. աշխ., էջ 138, «Մանր ժամանակագրություններ», II, 136:

39 Ա. Ն. Շահինյան, նշվ. աշխ., էջ 201—202:

40 Հ. Ա. Բադալյան, Օրացույցի պատմություն, Սրեան, 1970, էջ 494:

41 Վ. Հակոբյան, Դավիթ Քոբայրեցու հիշատակարանը («Տեղեկագիր», 1952, № 8, էջ 115 և 119):

42 Ուրեմն, արձանագրության թվականը պիտի վերականգնել ոչ թե Ուր, այլ՝ Ուն:

43 Ուշագրավ է Ա. Շահինյանի այն ենթադրությունը, թե Արագածոտնը պատկանել է Անիի Շեղագյաններին (նշվ. աշխ., էջ 202):

44 Նոր հրատ. տե՛ս Ա. Ն. Շահինյան, նշվ. աշխ., էջ 199—200, մատենագիտությունը՝ ծան. 12:

45 Նույն տեղում:

զաւակացս. որ առ յաւիտեան: Եւ վարդապետս միարանքս հաստատեցին... ինձ
 և ի յիշումն հոգոյն սրբո զաւագ խորանն՝ ինձ Զաքարիայի, եւ այլն՝ հասա-
 րակաց յաւատարազել զՔրիստոս»։ Հարկերի թեթեւացումը տեղի էր ունենում
 աստիճանաբար, երբեմն այս կամ այն հարկատեսակը վերացնելու (իմա թող-
 նելու), երբեմն էլ այլ հարկով փոխարինելու ձևով։ Կոշի վրացերեն արձանա-
 գրության մեջ առկա է հիշյալ երկու եղանակն էլ։ Իվանեն կոշեցիներին թողել-
 աղաաել է Վերին հանդամասի շաբաթից, իսկ Վարի հանդամասի առնչու-
 թյամբ միայն ցորենի դալայից է ազատել՝ այդ երկուսի դիմաց սահմանելով
 մեկ տրոր մշտական իրենց համար գործելու պարտույթ։ Թեև վերջինիս ստույգ
 նյութականացված արժեքը մեղ հայտնի չէ, բայց անշուշտ նշանակալիորեն
 պակաս պիտի լիներ, քան Վերին սահմանի շաբաթն ու Վարին՝ ցորենի դա-
 լան չին՝ միասին վերցրած⁴⁶։ Ն. Մառի, Հ. Մանանդյանի, Ս. Եղիազարյանի,
 Ս. Հակոբյանի եւ այլոց ուսումնասիրությունների շնորհիվ շաբաթի հարկա-
 տեսակի հետ կապված կարևոր շատ հարցեր լուծված են⁴⁷։ այն հողից, հացից
 ու հացարուսից, այգիներից, անասուններից, բամբակից, յուղից ու ձեթից
 ավատատիրոջը արդյունքով կամ դրամով տրվող հարկ էր, արդյունքի 1/10
 չափով (դոնե 13-րդ դարում այդպես էր, քանի որ Սահմադիրը 1284 թ. մասնա-
 վորապես հիշում է, թե «թողաք զՄրենոյ տասնակն հացին, որ է շաբաթան»⁴⁸)։
 Պիտի ենթադրել, որ Իվանեն ու ինչպես կոշեցիներին ազատել են «Վերին հան-
 դասահամանի» հողային շաբաթից, այլապես նրանք կմասնավորեցնեին, թե
 խոսքը հողից ստացվող որ արդյունքի մասին է, ինչպես այդ արել են «Վարի
 հանդասահամանի» առնչությամբ։ Բայց այս դեպքում արդեն նրանք այլ հար-
 կանուն են տալիս՝ դալայ, որի հետ կապված որոշ հարցեր դեռ պարզված
 չեն։ Նախ դիտենք, որ վրացերեն արձանագրության ԼՂԾԼԾԶ ընթերցումը
 որևէ կասկած չի հարուցում։ Թեև Լ-ն գոյացած փոստրակից վնասվել է, բայց
 պահպանվել է նրա վերին հատկանշական կիսաղեղը, և Ա. Շանիձեի վերա-
 կանգնումը միանգամայն ճիշտ է։ Ինչ վերաբերում է բառավերջի կիսաձայն
 Զ-ին (հյ.՝ յ), ապա թերևս գործ ունենք ոչ այնքան վրացերենի օ-ն հնչյու-
 նափոխության, որքան հայերենում բառավերջի բաց վանկի ա-ից հետո յ կի-
 սաձայն գրելու ընդհանրական ավանդույթի հետ⁴⁹։ Այս տերմինը ևս անժանոթ
 չէ Հայաստանի վիճագիր արձանագրություններին՝ ԱԼ դ. սկսած։ Պրոֆ. Ա. Հա-
 կոբյանը մատնացուցում է բառիս արձանագրական վեց վկայություն⁵⁰։ Նրան-
 ցից մեկը Աբու Սեիդի՝ Անիի մզկիթի պատին թողած պարսկերեն արձանա-
 գրության Ղ. Ալիշանի թարգմանությունն է⁵¹, որ ամենևին ստույգ չէ։ Պարս-

از هیچ افریده بعثت قلان و نمازی و طرح

⁴⁶ Այդ պարզորոշ բխում է արձանագրության շաբաթանքից, ուր ավելի շատ խոսվում է յուղենելու մասին, քան սահմանելու։

⁴⁷ Գրականությունն ու քննությունը տե՛ս Ս. Ե. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, Երևան, 1957, էջ 402—409։

⁴⁸ И. О р б е л и, Надписи Мрена, Пгд, 1917, стр. 6 (պահպանված միակ սրբագրական օրինակ)։

⁴⁹ Երբեմն նույնիսկ հրամայականով գրված կարդա-ն գրվում է կարդալ։ Օրինակների վկայակոչություն տե՛ս Ա. Ա. Ավագյան, Վիճական արձանագրությունների հնչյունաբա- նություն, Երևան, 1973, հնչյունափոխ. տախտակ։

⁵⁰ Ս. Ե. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 419—421։

⁵¹ Շիրակ, էջ 56։

نخواهند چيزی غير ۵ — «... ۵-րդ արարածից դալանի, նեմարի, թարհի ու այլ պատրվակով ոչինչ չուզեն»։ Ուրեմն խոսքը դալան հարկի մասին է և ոչ խալա-խալե⁵²։ Մորագրելի է նաև Սահմադինի՝ 1273 թ. Մրենում վիճադրած արձանագրության խալալը. «վիճական տարեգրում», որից օգտվել է Ս. Հակոբյանը. առկա է «ի խալալ և յերուրդ հարկէ»⁵³։

Ակադ. Հ. Օրրելու հիշյալ անտիպ վերծանության մեջ ունենք. «թուակ[անին] Չիբ, Ողորմութեամբն Այ, ես պարոն Սահմադինս ազատեցի զսուրբ ուխտն Արշվա[ռ]ո, այգիքն Մրենն և Աւշականո ի հալալ և յաւելուրդ հարկէ, որ բնական ազատ էր...»։ Բարեբախտաբար, Մրենի արձանագրությունների տախտակներից մեկում պահպանվել է այս նշանակալի հիշատակարանը, որի ուսումնասիրությունից պարզվում է, որ սրբագրելի են առկա բոլոր վերծանությունները. այնտեղ վիճադրված է. «...այգիքն Մրենն եւ Աւշականո ի խալալ եւ յրդ հարկէ...»⁵⁴։ Բառավերջի է-ն հողմսահարված է, բայց տառապատկերը նկատելի է, մանավանդ երբ համեմատության ենք առնում հարկէ բառի է-ն. վերծանողները ուշադիր չեն եղել է-ի վերին կեռ-ելուստի հետքի առկայությանը։ Ուստի ձիշտ չեն՝ ոչ նախորդ վերծանողների խալալ և ոչ Հ. Օրրելու հալալ ընթերցումները։ Խալէ-ի ձշտումից հետո նկատենք նաև, որ յրդ կրճատորության բացումը իբրև յաւելուրդ չի պատճառաբանվում։ Ն. Սարգսյանը զգուշության թեկնածու էր վաճառքի (թողել է՝ յրդ), Ղ. Ալիշանը կարգացել է յերուրդ, որ ավելի ընդունելի է, քան Հ. Օրրելու առաջարկած յաւելուրդ-ը⁵⁵։ Մի խոսքով, խալէ տերմինը հայերենում վկայված է Անիում (Աբղարիբի եկեղեցի, 1036 թ.)⁵⁶, Թալինում (1307 թ.)⁵⁷, Մրենում (Սահմադինի 1279 և 1288 թվականների արձանագրություններ)⁵⁸, չորս անգամ⁵⁹, Սահմադինի վիճադրում խալէն վերաբերում է այգիներին («...այգիքն Մրենն եւ Աւշականո ի խալալէ...»), կամ պտղից ստացած գինուն («...թողաք գէգնցն գինո և խաղողի խալէն»), ինչպես որ Աղբուղայինը Թալինում («...թողի... զԹալնայ գինոյ խալէն...»)։ Այստեղից Ս. Հակոբյանը իրավացիորեն եզրակացնում է, թե «խա-

52 Ա. Շանիճի հոգվածում հակառակն է տեղի ունեցել. Թալինի 1267 (resp. 1307) թ. արձանագրության բնագիրը վկայակոչելիս («...թողի դիմ հայրենիք գեղիս՝ զթալնայ գինոյ խալէն վասն...») հայերենի որոշյալ առման Ե-ն ընդունել է իբրև արմատական, ուստի թարգմանել տառադարձել է КОЖАИ ЯОЛЛО — جالو (նշվ. աշխ., էջ 13), մինչդեռ դա խալալ-խալէ հարկն է։

53 «վիճական տարեգիր», էջ 116, նույնն է՝ Ն. Սարգիսյան, Տեղագրությունը ի Մեծ և Փոքր Հայոց։

54 Խալալ ընթերցումը խալալ է սրբագրել դեռ Դադ. Ավգալբեդյանը («Հայագիտական հետազոտություններ», Երեւան, 1969, էջ 394, ծան. 122)։

55 Թադ. Ավգալբեդյանը առաջարկել է սրբագրել (իր խոսքերով՝ թերևս սխալ է կարդալ) «Դ հարկէ», որ ձեռքի տակ լուսանկար չունենալու պատճառով առաջացած թուրիմացություն է (նշվ. աշխ., էջ 395, ծան.)։

56 Դիվան, I, 48։

57 «վիճական տարեգիր», էջ 110—111։

58 Մ. Օրբելի, նշվ. աշխ., էջ 5—6 (տե՛ս Աղյուսակը)։

59 Մենք համոզված չենք, թե Ս. Հակոբյանի վկայակոչած (նշվ. աշխ., էջ 420) նորավանքի 1296 թ. արձանագրության («...ազատ յամէն աշխարհական հարկաց՝ ի դիւանէ, ի խալանէ և յամէն չարէ...» (տե՛ս Դիվան, III, 216) ի խալանէ-ն խալէ պիտի հասկանալ (արար. ۱۱۰) և ոչ դալան (պարսկ. ۱۱۰)։

լին այգիներից, պտղատու ծառերից, ոգելից խմիչքներից գանձվող հարկն է»⁶⁰։
 Եւ միաժամանակ նկատում է, որ քննությունից դուրս է մնում Անիի արձա-
 նագրության տեղեկությունը, ուր ասված է. «...Կամ եղև ինձ՝ տեառն Պետրոսի
 յայոց կաթողիկոսի ապա զայգին Աշնկի... Արդ, տուաք (զայգիս— Պ. Մ.)
 որմով և ծառովք՝ պտղարերովք և անպտղաւք, և խոտագետնովք և Գ արւ ջուր՝
 ազատ ի խալաէ և ի գեղջէ յամենայն հասուց...»⁶¹։ Փաստորեն այստեղ էլ խա-
 լէն (ճիշտը՝ խալա-ն) այգուն է վերաբերում և ոչ երբեք ջրին, ինչպես, հավա-
 նաբար, թվացել է հեղինակին։ Հիշյալ քննարկումից պարզ է արդեն, որ Կոշի
 վրացերեն արձանագրությունը ղալա-ն բոլորովին այլ բովանդակություն է
 վկայում։ Նրանում պարզիպարզո ասված է՝ «...վարի [հանդա]սահմանի միայն
 ցուրենի ղալայից է ազատված կոշեցի մարդը»։ Խնդրի արժարժումը շատ կհեշ-
 տանար, եթե ենթադրեինք, թե խալան ու ղալանը (խալանը) նույն հարկն են,
 ինչպես կարծել է Թադ. Ավդալբեգյանը, խալա բառը խալանի (նույն՝ ղալան)
 աղճատված ձև համարելով⁶²։ Հ. Աճառյանը ընդունել է այս ստուգաբանական
 նույնացումը⁶³, Ստ. Մալխասյանցը՝ հարցականով⁶⁴։ Իրականում նման ստու-
 գաբանական նույնություն չկա. խալա-ղալա-ն (վրց. ღალა-ნ) գալիս է արաբե-
 րենից— غلة (հոգն. غلات կամ غلال)⁶⁵, որ նշանակում է արդյունք, հավաքում,
 եկամուտ, հունձ, բերք, հատիկ, հացահատիկ. մինչդեռ խալանը (ղալանը) ույ-
 դուրերենում վկայված qalan-ն է (այստեղից էլ անցել է պարսկերենին—
 قلان ու տարածում գտել մոնղոլական շրջանում) և նշանակում է казан, ос-
 новной налог (преимущественно натурой), с земледельческого насе-
 ления в пользу государства⁶⁶։ Տերմինը երկու անգամ հիշատակվում է
 Ռաշիդ-ադ-դինի մոտ, ինչպես նաև Անիի հիշյալ պարսկերեն արձանագրու-

⁶⁰ Ս. Հ ա կ ո բ յ ա ն, նշվ. աշխ., էջ 420։

⁶¹ Դիվան, I, 48։

⁶² Թ. Ա վ դ ա լ բ ե գ յ ա ն, նշվ. աշխ., էջ 395։

⁶³ Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Հայերեն արձատական բառարան, հ. Գ, Երևան, 1930, էջ 317—318։

⁶⁴ Ստ. Մ ա լ խ ա ս յ ա ն ջ, Հայերեն բացատրական բառարան, II, 228։ Այս երկու հե-
 դինակների մոտ խալայի առկայությունը վրիպել է Ա. Շանիձեի ուղագրությունից, ուստի կարծել
 է, թե բառը հայերեն բառարաններում գրանցված չէ (նշվ. աշխ., էջ 15, ծան. 11)։ Խալայ-խալէ-ն
 դիմորդ հոգով հնչունափոխությունը Թադ. Ավդալբեգյանը սրամտորեն համեմատում է ծառա-
 ծառէն, փեսա-փեսէն փոփոխությունների հետ (նշվ. աշխ., էջ 395, ծան. 123)։ Կան և միջ-
 նադարյան վկայված օրինակներ (տե՛ս Ս. Ա վ ա դ յ ա ն, նշվ. աշխ.)։ Դաժա-Բաժաճնի նույն-
 նացման փորձ կատարել է դեռ Ն. Զուրինաշվիլին՝ անցյալ դարի կեսերին (տե՛ս նրա՝
 ქართ. ლექსიკონი რუს. თარგმანით, თბ., 1961, გვ. 408)։

⁶⁵ Դաժա հարկային տերմինը ծանոթ է վրաց բառարանագիր Ս.-Ս. Օրբելիանին (տե՛ս
 նրա՝ თხზულებანი, თბ., 1966, ტ. IV, გვ. 246), Իսկ Դ. Զուրինաշվիլին (կամ նրա խմբագիր
 Մ. Բրոսեն) դիպե և բառի արարներն լինելը— غلة (տե՛ս նրա եռալեզու բառարանի
 էջ 524)։

⁶⁶ Древнетюркский словарь, Л., 1969, стр. 410. Ույդուրերենում այդ բառից կաղմը-
 ված են՝ qalan-kes, qalancl, qalanlı, qalansız. Բառարանի հեղինակները տերմինի ա-
 րարական ստուգաբանություն չեն առաջարկում։ Նեֆիտին غل-ը համարում է բնիկ
 պարսկերեն բառ, մի տեսակ հարկ, որ Շիրվանում են վերցնում غل، نفیس، جلد
 (٢٦٩٥ : صفرم)։ Նա արաբերենի հետ չի կապում նաև պարսկ. غل، որից
 շատ բառարարություններ կան (նշվ. աշխ., էջ ٢٤٨٤)։

բում: Ուրեմն եկեղեցու կառուցումը տեղի է ունեցել մինչև այդ արտոնագրի հրապարակումը, բայց ոչ 1199—1200 թվականներից վաղ, երբ Զաքարյանները ազատագրեցին դավառը: Շինարարական արձանագրության վրացերեն լինելը արդեն լիովին ապացույց է, որ կառուցողը իվանեն է (գուցե նորից կնոջ հետ), իսկ վերջինս այս տիրույթներն ստացավ եղբոր մահից հետո՝ իբրև Շահնշահի խնամակալ-հորեղբայր: Ուստի՝ եկեղեցու կառուցման ժամանակը ևս Զաքարիայի մահից հետո պիտի հաշվել, նույն 1214—1218 թվականների արանքում⁷¹: Դատելով արևելյան խորանում մեկ լուսամուտ ունենալու և շրջապատի տապանագրերում վրացերեն դրվածքների բացակայության փաստից, կարելի է հետևել, թե կառույցս միաբնակ հաստատություն է եղել, թեև ճարտարապետական ինչ-ինչ նորամուծությունների հետքեր կան: Եվ հիրավի, իվանեն Արագածոտնում դավանական համախոհներ չէր կարողանա փնտրել, կոշեցիները «միամիտք նորայ» չէին: Մոռանալու չէ և մեկ այլ պարագա. Կոշում, իվանեի կառուցած եկեղեցուց փոքր-ինչ հյուսիս-արևմուտք, գտնվում է մատենագրությունից լավ հայտնի Կոշավանքը՝ ս. Ստեփանոս մենաստանը, որի միաբաններից էր Զաքարյանների գալուստը երազող և որմնափակ խաչքարի արձանագրությամբ այն ավետող Պետրոս Ականատես վարդապետը: 1172 թ. այստեղ է գրվել Եղիշեի Պատմության՝ այժմ բանասիրությանը բաշ հայտնի ձեռագիրը (Մատենադարան, ձեռ. № 1890), Դավիթ գրչի ձեռքով, որ հիշատակագրել է. «գրեցի զսա ի վանս Կոշա, ընդ հովանեաւ սրբոյ Ստեփանոսի, ի մէջ սիրելի եղբայրութեանց»⁷²: Իվանեն զանց չէր առնի այդ հեղինակավոր «եղբայրության» (իմա միաբանության) գոյությունը, մանավանդ որ իր կառուցած եկեղեցուց մի քանի մետր ներքև, այժմյան ս. Գևորգ եկեղեցու տեղում, նշանավոր սրբարան կար՝ ս. Գևորգի թե Գևորգ Մարգարտունու (այժմ այդպես է մեկնաբանվում) նշխարների մատնացուցումով:

Զաքարյան տան շառավիղները հարյուրամյակից ավելի տիրեցին Կոշին ու գավառին՝ սատարելով տեղիս գրիչների մշակութային գործունեությունը: 1333 թ. «ի սուրբ ուխտս Կոշայ» գրված ճաշոցի գրիչ Հակոբը արևշատություն է մաղթում Արագածոտնի Վահրամ իշխանին՝ «որդույ Մեծին Իւանէի» (իմա իվանե Բ) «չոր և տէր Յիսուս պահեսցէ զսա խաղաղական կենօք և յերկար ժամանակօք՝ ամենայն հեծելազօրօքն իւրովք, փառաց ի փառս բարձրանալով, և զոռացուցէ զսուր նորա ի վերայ թշնամեաց իւրոց»⁷³:

Այսպիսով, Կոշի վրացերեն արձանագրությունը XIII դ. առաջին քառորդի Հայաստանի և Վրաստանի սոցիալ-տնտեսական պատմության կարևոր և արժանահավատ աղբյուրներից մեկն է:

О ГРУЗИНСКИХ НАДПИСЯХ КОША

П. М. МУРАДЯН

Резюме

Отмечая наличие грузинской надписи в Коше, Н. Я. Марр надеялся найти в ней новые данные по истории позднего халкедонитства в Армении. Чтение ее впоследствии было поручено им И. А. Орбели (1913 г.),

⁷¹ Այն փոքր կառույց է, և շինարարությունը հեշտությամբ կավարտվեր 1—2 տարում:

⁷² Գ. Հովսեփյան, Յիշատակարանը ձեռագրաց, Անթիլիաս, 1950, էջ 412:

⁷³ Գ. Հովսեփյան, Խաղաղական կամ Պոռոյանը Հայոց պատմության մեջ, մասն Ա., Վաղարշապատ, 1928, էջ 21, ծան., 1969 թ., հրատ.՝ էջ 10, ծան. 3:

результаты работы которого по ряду обстоятельств остались неопубликованными. Во время экспедиции 1924 г. А. Г. Шанидзе переписал текст надписи, а издал ее в 1959 г., снабдив публикацию переводом и комментариями. Надпись гласит: «Во имя бога, заступничеством св. Богородицы, мы, мандатуртхуцес Иване и Хоша—мать Шанше и его братьев, простили вам, кошцам, шариат верхнего участка, а [в отношении] нижнего участка людям из Коша прощена гала только с пшеницы для долгоденствия нашего и наших детей—Шанше и его братьев. Вы же установили, чтобы одно рало со своими принадлежностями и вашими быками вечно было для нас. Мы—исполнители сего. Кто изменит—да будет проклят и отрешен благодатью святых».

Датируемая нами 1214/15 годами надпись мало чем оправдывает надежды Марра относительно халкедонитства; она, по существу, является важнейшим первоисточником по социально-экономической истории Армении и Грузии во второй декаде XIII в. Фигурируемые в ней налоговые термины шариат и гала науке известны и по другим армяно-грузинским эпиграфическим и нарративным источникам, особенно первый из них (взимался, согласно надписи Сахмадина от 1284 г., в размере 1/10 части продукции). Гала (*խալա*, *խալ*, *ḡala*; по известным доселе источникам взималась в качестве платы натурой «с садов, плодовых деревьев и спиртных напитков» (С. Акопян). Однако кошская надпись вносит существенную поправку в наши представления, ибо в ней «прощена гала с пшеницы». Попытка исследователей идентифицировать калан и гала (Т. Авдалбекян, Р. Ачарян) и считать их бажем или акцизом до реализации товара не находит подтверждения.

Определяя меру установленной Иване Долгоруким (Мхаргрцель) и его супругой Хоша (т. е. Хошак) подати, А. Г. Шанидзе склонен *сахневель* (плуг, рало, соха) считать не пахотным орудием, а «то, что можно вспахать плугом (в один день)». Анализ текста надписи и привлечение иных источников приводят к выводу, что владельцы края довольствовались не обработкой кошцами земли около 0,7 гектара, а одно рало постоянно (и вечно) должно было обрабатывать землю для освободителей-хозяев Арагацотна. Повинность кошцев куда большая, чем полагалась в имеющемся толковании.